Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2021 թ. որոշմամբ
««ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00563
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-12-27
1.5 ՀՎՀՀ-ն		00444629
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10530904
		+(374)91429835
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.armenic.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@armenic.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գայանե Հարությունյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	12	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ ծրագիր	47259500
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by
GHAZARYAN
ZHANNA
6705820381
Date: 2021.06.25
18:06:47 AMST

	ԲՈՒՍԹ-հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանման ծրագիր	7611154
	Կրթական որակավորումների համեմատումը հուսալի ճանաչման համար-QUATREC ծրագիր	1209600
	Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման հարցերով հայ-նորվեգական համագործակցության ծրագիր	2047815
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ ծրագիր	47215002	
ԲՈՒՍԹ-հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանման ծրագիր	7611154	
Կրթական որակավորումների համեմատումը հուսալի ճանաչման համար-QUATREC ծրագիր	1205647	
Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման հարցերով հայ-նորվեգական համագործակցության ծրագիր	2047815	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	61859509	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	58079618	

Նշումներ՝

2020թ-ի ընթացքում ՀՀ պետ բյուջե է վերադարձվել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ» ծրագրի 2019թ-ի և 2020թ-ի ֆինանսավորումներից չօգտագործված միջոցները՝ 2019թ-ի համար 164690 դրամ և 2020 թ-ի համար 44498 դրամ:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___3___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	5,476	6,866
Ոչ նյութական ակտիվներ	11	2,938	275
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**8,414**	**7,141**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		313	223
Կանխավճար և այլ դեբիտորական պարտքեր	12	38	61
Ֆինանսական ներդրումներ	13	7,565	7,196
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	13,503	13,501
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**21,419**	**20,981**
Ընդամենը ակտիվներ		29,833	28,122
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Չբաշխված շահույթ		6,546	12,331
Ընդամենը սեփական կապիտալ		6,546	12,331
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	8,414	7,141
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**8,414**	**7,141**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	105	139
Կրեդիտորական պարտք բյուջեին	17	196	419
Եկամուտներին վերաբերող շնորհներ	18	8,342	8,092
Ընթացիկ պահուստ	19	6,230	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**14,873**	**8,650**
Ընդամենը պարտավորություններ		**23,287**	**15,791**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**29,833**	**28,122**

Գլխավոր տնօրեն
Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Ժաննա Ղազարյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 26-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Շնորհներից եկամուտներ, այդ թվում	6	**56,498**	**59,061**
Եկամուտներին վերաբերող շնորհ		54,781	57,557
Ակտիվներին վերաբերող շնորհ		1,717	1,504
Վարչական ծախսեր	7	(65,341)	(61,280)
Այլ եկամուտներ	8	3,102	3,103
Այլ ծախսեր		(11)	(19)
Գործառնական գործունեության արդյունքները		**(5,752)**	**865**
Ֆինանսական եկամուտ	9	616	490
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ		-	700
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ/(ծախս)	9	30	(73)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		**(5,106)**	**1,982**
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ		(679)	(842)
Տարվա շահույթ/(վնաս)		(5,785)	1,140
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**(5,785)**	**1,140**

00444629
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FUND
L-05

Գլխավոր տնօրեն

Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

Ժաննա Ղազարյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 26-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	-	-	11,191	11,191
Տարվա շահույթ/վնաս	-	-	1,140	1,140
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			1,140	1,140
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	-	-	12,331	12,331
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	-	-	12,331	12,331
Տարվա շահույթ/վնաս	-	-	(5,785)	(5,785)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			(5,785)	(5,785)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	-	-	(6,546)	(6,546)

Գլխավոր տնօրեն

Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

Ժաննա Ղազարյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 26-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	58,209	54,666
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(34,873)	(34,883)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(6,893)	(10,286)
Հարկերի գծով վճարումներ	(12,903)	(10,850)
Այլ ստացված գումարներ	3,069	3,103
Այլ վճարումներ	(4,420)	(4,241)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**2,189**	**(2,491)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Տոկոսների ստացումից մուտքեր	247	490
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վաճառքներից մուտքեր	-	700
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից ելքեր	(2,991)	(800)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(2,744)**	**390**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(555)**	**(2,101)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	13,501	15,675
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(54)	(73)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթագրություն 14)	12,892	13,501

Գլխավոր տնօրեն

Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

Ժաննա Ղազարյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն, որը հիմնադրվել է ՀՀ Կառավարության 2005 թվականի մարտի 31-ի N 699-Ն որոշմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնական Մարմնի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 27-ին: Պետական գրանցման վկայականի համարն է՝ 03Ա - 070272, գրանցման համարը՝ 222.160.00563:

Հիմնադրամի կանոնադրության վերջին փոփոխությունը հաստատված է Հոգաբարձուների խորհրդի կողմից 1 մարտի 2019 թվականին և ստացել է պետական գրանցում 2019 թվականի հուլիսի 30-ին:

Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած են Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից տրված ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ կենտրոնների գործունեության և ծառայությունների մասին միասնական (եվրոպական) կանոնակարգի հիմնադրույթները:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 375005, ք. Երևան, Տիգրան Մեծի 67, գործունեության հասցեն է՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Ամիրյան 27, տ. 10, տ. 11 :

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հիմնադրամի հնարավոր շահառուներն են՝ սովորողները, ուսանողները, գործատուները, ծնողները, ուսումնական հաստատությունները, կրթության կառավարման մարմինները և շահագրգիռ անհատները:

Հիմնադրամը ՀՀ կառավարության, կրթական հաստատությունների և միջազգային կառույցների ներդրումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամի նպատակներն են՝

- բարձրագույն ուսումնական հաստատություններին, գործատուներին, մասնագիտական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին որակավորումների, կրթական համակարգերի և փոխճանաչման գործընթացների մասին համարժեք, հուսալի և ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը,
- օգտագործելով գոյություն ունեցող չափանիշները և ընթացակարգերը՝ շահագրգիռ կողմերին երաշխավորությունների, ըստ անհրաժեշտության՝ նաև փոխճանաչման մասին եզրակացության տրամադրումը՝ որակավորումների գնահատման արդյունքների հիման վրա,
- քաղաքացիներին փոխճանաչման հարցերով իրավունքների մասին տեղեկատվության տրամադրումը,
- ազգային մակարդակում բարձրագույն կրթության որակավորումների, ինչպես նաև բարձրագույն կրթության մուտքն ապահովող փաստաթղթերի ճանաչման մասին հավաստի տեղեկատվության տրամադրումը,
- ազգային մակարդակում համարժեք այլ տեղեկատվական կենտրոնների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, դրանց ցանցերի և այլ համապատասխան մասնակիցների հետ համագործակցությունը,

- Եվրոպական միության շրջանակներում մասնագիտական փոխճանաչման համապատասխան մարմինների հետ համագործակցությունը՝ կարգավորվող մասնագիտությունների հարցերով,
- բարձրագույն կրթության քաղաքականության և օրենսդրության մշակմանը մասնակցությունը՝ ազգային և միջազգային մակարդակներում,
- ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցերի շրջանակներում՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքի որակավորումների համընդգրկուն կառուցվածքի մշակմանը նպատակաուղղված համագործակցությունը,
- այլ տարածաշրջանների երկրներում ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցերի գործունեությանը նպաստելը:
- երկրի կրթական համակարգի մասին տեղեկատվական և այլ նյութերի մշակմանը, հրապարակումներին, պարզաբանումներին, համեմատական հետազոտություններին մասնակցությունը՝ նախաձեռնված Եվրախորհրդի, Եվրոպական հանձնաժողովի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից,
- տարբեր երկրների կրթական համակարգերի մասին, նրանց կողմից տրվող որակավորումների, դրանց՝ Հայաստանի Հանրապետության որակավորումների համապատասխանության, փոխճանաչման բնագավառի օրենսդրության, պետական հավատարմագրված ուսումնական հաստատությունների և դրանց ընդունելության պահանջների մասին տեղեկատվության հավաքումը և պարբերական նորացումը,
- փոխճանաչման բնագավառում այլ տարածաշրջանների երկրների համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը,
- ազգային կրթական համակարգի մասին, համաձայն երաշխավորվող ձևերի, տեղեկատվության կազմումը, հաստատումը և պարբերական թարմացումը,
- դիպլոմի ներդիրում ներառվող ազգային կրթական համակարգի բնութագրի մշակումը, դրա ներդրմանը նպաստելը:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը,
- Հիմնադրամի գլխավոր տնօրենը:

Հիմնադրամը կարող է գործել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

Հիմնադրամի աշխատակիցների թվաքանակը 31 դեկտեմբերի 2020թ. դրությամբ կազմում է 9 աշխատակից, (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 աշխատակից):

2 *Հայաստանի գործարար միջավայրը*

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և սոցիալտնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում վերջերս դիտվող ճգնաժամը ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի ֆինանսական դրության և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3 Պատրաստման հիմունքները

ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՍՄ) պահանջների համաձայն: Ներկայումս ՖՀՍՄ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՍՄ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՍՄ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՍՄԽ)՝ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներին:

բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով և հիմնական միջոցների, որոնք վերագնահատվում են իրական արժեքով կանոնավոր հիմունքով:

գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է հազար դրամներով:

դ) Դատողությունների գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՖՀՍՄ-ների պահանջների համաձայն պատրաստելու համար, Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

ա) Ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհը դա պետության՝ կառավարության, կառավարական գործակալությունների կամ նմանատիպ մարմինների, տեղական, ազգային կամ միջազգային կազմակերպությունների կողմից միջոցների փոխանցումն է Հիմնադրամ, անցյալում կամ ապագայում Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմանների դիմաց: Շնորհները դասակարգվում են՝

ա) ակտիվներին վերաբերող շնորհներ, որոնց հիմնական պայմանն այն է, որ շնորհ ստացող Հիմնադրամը պետք է գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ

բ) եկամուտներին վերաբերող շնորհներ, այն շնորհներն են, որոնք չեն վերաբերում ակտիվներին:

Շնորհները ճանաչվում են, եթե միայն կա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կհամապատասխանի դրան կից պայմաններին, և շնորհը կստացվի:

Շնորհների կազմում Հիմնադրամը հաշվառում է անհատույց ստացվող միջոցները, նվիրատվությունները, միջազգային և տեղական շնորհատու կազմակերպություններից հիշյալ ծրագրերի իրականացման համար ստացվող դրամական միջոցները:

Հիմնադրամը շնորհները ճանաչում է շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում է շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամական շնորհների, ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ և ճանաչվում են եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով՝ ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Երբեմն որոշակի պայմանների արդյունքում շնորհները դառնում են վերադարձման ենթակա: Շնորհը, երբ դառնում է վերադարձման ենթակա, Հիմնադրամը այն հաշվառվում է որպես հաշվառման գնահատումների փոփոխություն: Եկամուտներին վերաբերող շնորհի վերադարձումը առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի գծով չամորտիզացված հետաձգված կրեդիտային մնացորդի հաշվին: Այնքանով, որքանով վերադարձումը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը կամ երբ հետաձգված կրեդիտային մնացորդ չկա, վերադարձումը անմիջապես ճանաչվում է ծախս: Ակտիվներին վերաբերող շնորհի վերադարձումը արտացոլվում է հետաձգված եկամտի մնացորդի նվազեցման միջոցով՝ վերադարձման ենթակա գումարի չափով:

բ) Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները, որպես ակտիվ ճանաչվելուց հետո, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, բացառությամբ հողի և շենքերի, որոնք ներկայացվում են վերագնահատման արժեքով:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և փոխառության ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով՝ շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստում ներառված գումարները փոխանցվում են չբաշխված շահույթի:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված

ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածություն սկսում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- Մեքենա, սարքավորումներ, համակարգչային տեխնիկա — 1 տարի
- Տրանսպորտային միջոցներ — 8.5 տարի
- Արտադրատնտեսական գույք, այլ հիմնական միջոցներ — 5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

գ) Ոչ նյութական ակտիվներ

Հիմնադրամի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ այլ փոխարինող գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում սկսած այն պահից երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

դ) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

ե) Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ՀՀ դրամով՝ գործառնության ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փակման փոխարժեքը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը, իսկ սկզբնական արժեքով ոչ դրամային հոդվածները ներկայացվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացած տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտարժութային հաշիվների մնացորդների վերահաշվարկման համար Հիմնադրամի կողմից կիրառվել է հետևյալ փոխարժեքները՝

- 1 ԱՄՆ դոլարը 522.59 ՀՀ դրամ,
- 1 ԵՎՐՈ 641.11 ՀՀ դրամ,
- 1 Ռուսական ռուբլի 7.02 ՀՀ դրամ:

զ) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, (ինչպիսիք են օրինակ՝ վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի տարեկան արձակուրդները) և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Հիմնադրամը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

է) Հասույթ գնորդների հետ պայմանագրերից

Հիմնադրամը հաշվառում է հաճախորդի՝ գնորդի հետ պայմանագիրը միայն այն դեպքում, եթե բավարարում է ստորև թվարկված բոլոր չափանիշները՝

ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը (գրավոր, բանավոր կամ այլ սովորական բիզնես գործելակերպի համաձայն) և պարտավորվում են կատարել իրենց համապատասխան պայմանագրային պարտականությունները.

բ) Հիմնադրամը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքներին կամ ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները.

գ) Հիմնադրամը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների վճարման պայմանները.

դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ (այսինքն՝ պայմանագրի արդյունքում ակնկալվում է, որ կփոփոխվեն Հիմնադրամի ապագա դրամական միջոցների հետ կապված ռիսկերը). և

ե) հավանական է, որ Հիմնադրամը կստանա այն հատուցումը, որը իրավունք ունի ստանալու, գնորդին փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

Հիմնադրամը ճանաչում է հասույթ, երբ կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը փոխանցվում է գնորդին:

Հատուցման գումարի ստացման հավանականությունը գնահատելիս՝ Հիմնադրամը հաշվի է առնում միայն գնորդի կարողությունը և մտադրությունը վճարել հատուցման այդ գումարը, երբ այն դառնում է վճարման ենթակա: Հատուցման գումարը, որի ստացման իրավունքը կունենա Հիմնադրամը, կարող է լինել ավելի քիչ, քան պայմանագրում ամրագրված գինը, եթե այդ հատուցումը փոփոխուն է՝ պայմանավորված գնորդին առաջարկվող գիծումների հետ:

Երբ գնորդի հետ պայմանագիրը չի բավարարում վերը թվարկված չափանիշներին, Հիմնադրամը գնորդից ստացված հատուցումը ճանաչում է որպես հասույթ, երբ տեղի են ունենում ստորև թվարկված դեպքերից որևէ մեկը՝

ա) Հիմնադրամը չունի գնորդին ապրանքներ կամ ծառայություններ փոխանցելու մնացորդային պարտականություն և գնորդի կողմից խոստացված ամբողջ հատուցումը ստացել է և այն վերադարձման ենթակա չէ, կամ

բ) պայմանագիրը դադարեցվել է և ստացված հատուցումը վերադարձման ենթակա չէ:

Կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսուհետև ակտիվ) համարվում է կատարված, երբ Հիմնադրամը այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ կատարման պարտականությունը կատարվում է, Հիմնադրամը ճանաչում է հասույթ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ պարտականությանը:

Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Հիմնադրամը ակնկալում է ստանալ որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները և ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարների:

Հատուցումը, որը խոստացվել է գնորդի հետ կնքված պայմանագրով, կարող է ներառել հաստատուն գումարներ, փոփոխուն գումարներ կամ երկուսը միասին:

Պայմանագրի կատարման ծախսումներ

Հիմնադրամը ճանաչում է պայմանագրի կատարման ծախսումներից առաջացող ակտիվ միայն այն դեպքում, եթե այդ ծախսումները բավարարում են հետևյալ բոլոր չափանիշները՝

ա) ծախսումները վերաբերում են ուղղակիորեն պայմանագրին կամ ակնկալվող պայմանագրին, որը Հիմնադրամը կարող է կոնկրետ որոշակիացնել,

բ) ծախսումները Հիմնադրամի համար ստեղծվում են ռեսուրսներ կամ բարելավում են ռեսուրսները, որոնք օգտագործվելու են ապագայում կատարման պարտականությունները կատարելու կամ շարունակելու նպատակով, և

գ) ակնկալվում է, որ ծախսումները կփոխհատուցվեն:

ը) Շահութահարկ

Շահույթի և վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից և հետաձգված հարկից: Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է:

Հարկվող շահույթը հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան տվյալ ժամանակաշրջանի համար որոշված շահույթն է, որից վճարվում է շահութահարկը:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի հարկային և ֆինանսական հաշվառման նպատակով հաշվարկված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունների հաշվարկման մեթոդը:

Հետաձգված հարկային պարտավորությունները ապագա ժամանակաշրջաններում վճարման ենթակա շահութահարկի գումարներն են՝ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ:

Հետաձգված հարկային ակտիվները ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են կապված՝

ա) նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ,

բ) չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջան տեղափոխելու հետ, և

գ) չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջան տեղափոխելու հետ:

թ) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքը պայմանագիր է, որը մի ընկերությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

Ֆինանսական ակտիվը դրամական միջոց է, այլ կազմակերպության բաժնային գործիք կամ այլ կազմակերպությունից դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու պայմնագրային իրավունք: Ֆինանսական պարտավորությունը այլ կազմակերպությանը դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու, կամ այլ կազմակերպության հետ իր համար պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն փոխանակելու պայմանագրային պարտականություն է:

Հիմնադրամը ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն ճանաչում է, երբ դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրի կողմ:

Հիմնադրամը ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ճանաչում կամ ապաճանաչում է՝ օգտագործելով առևտրի ամսաթվի հաշվառումը կամ վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը:

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման տարբերությունը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները ներառում են՝ դրամական միջոցները, դրամական միջոցով ավանդը բանկում, առևտրական դեբիտորական պարտքերը:

Հիմնադրամը՝ բացառությամբ առևտրական դեբիտորական պարտքերի, ֆինանսական ակտիվները և պարտավորությունները չափում է իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով:

Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ պարտավորության փոխանցման դիմաց:

Հիմնադրամը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հանում է ֆինանսական պարտավորությունը կամ դրա մի մասը այն ու միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Հիմնադրամը՝ մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրական կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները, վարկերը և փոխառությունները, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը:

Հիմնադրամը հաշվանցում է ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է զուտ գումարով միայն այն դեպքում, երբ տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և մտադիր է հաշվարկը իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

ժ) Պահուստներ

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է: Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստի ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ըստ ակնկալության կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Ձեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի և այդ պարտավորության հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

Պահուստի գումարը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որի գծով այդ պահուստը ճանաչվում է:

5 Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

Ընթացիկ տարում Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՍՍԽ) և ՀՀՍՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև.

ա) Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ՖՀՍՍ 3 փոփոխություններ,
- «Էականության սահմանումը» ՀՀՍՍ 1 և ՀՀՍՍ 8 փոփոխություններ,
- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում» ՖՀՍՍ 9 և ՖՀՍՍ 7 փոփոխություններ,
- «COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ» ՖՀՍՍ 16 փոփոխություններ:

բ) Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել:

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից բողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) » (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»,
- «Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ),
- «Անբարենպաստ պայմանագրեր, Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՍ 37 փոփոխություններ),
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

6 Շնորհներից եկամուտներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Շնորհներից եկամուտներ, այդ թվում		
ակտիվներին վերաբերող շնորհներից	1,717	1,504
եկամուտներին վերաբերող շնորհներից	54,781	57,557
	56,498	**59,061**

7 Վարչական ծախսեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Աշխատավարձ	41,987	34,757
Մաշվածության ծախսեր	1,717	1,504
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,321	11,422
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	627	634
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	782	1,138
Աուդիտորական, խորհրդատվական,ապահովագրական և բանկային ծառայությունների վճարներ	817	848
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	57	35
Այլ վարչական ծախսեր, այդ թվում	16,033	10,942
վարձակալական վճարներ	4,667	4,667
	65,341	**61,280**

8 Այլ եկամուտներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Մատուցված ծառայություններից եկամուտ	3,068	3,103
Այլ եկամուտ	34	-
	3,102	3,103

9 Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Ֆինանսական եկամուտ	616	490
Զուտ շահույթ/վնաս փոխարժեքային տարբերություններից	30	(73)
Ֆինանսական եկամուտ/ծախս	646	417
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր/եկամուտ	**646**	**417**

Ֆինանսական եկամուտը առաջացել է Հիմնադրամի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ներդրված կարճաժամկետ ավանդի նկատմամբ հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեգրված տոկոսներից: Փոխարժեքային տարբերությունից օգուտը (վնասը) առաջացել է արտարժույթային դրամաշնորհներից:
Դրամաշնորհների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է թիվ 18 ծանոթագրությունում:

10 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**7,096**	**14,900**	**4,288**	**26,284**
Ավելացումներ	800		-	800
Նվազեցում	-	(7,400)	-	(7,400)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**7,896**	**7,500**	**4,288**	**19,684**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	7,896	7,500	4,288	19,684
Ավելացումներ	261		-	261
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**8,157**	**7,500**	**4,288**	**19,945**
Մաշվածություն				
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	6,567	7,905	4,288	18,760
Տարվա մաշվածություն	576	882	-	1,458
Օտարումներ	-	(7,400)	-	(7,400)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**7,143**	**1,387**	**4,288**	**12,818**

Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	7,143	1,387	4,288	12,818
Տարվա մաշվածություն	768	883	-	1,651
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	7,911	2,270	4,288	14,469

հազ. դրամ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	529	6,995	-	7,524
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**753**	**6,113**	**-**	**6,866**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**246**	**5,230**	**-**	**5,476**

Աուդիտի ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացվել են հիմնական միջոցների տարեկան գույքագրման արձանագրությունները:
Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:
Հիմնադրամը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 24 հուլիսի 2008թ. N830-Ն որոշմամբ, իր գործունեության նպատակների համար 2018թ. ձեռք բերված տրանսպորտային միջոցի ծառայության ժամկետը սահմանել է 8.5տարի:
2020 և 2019 թվականների ընթացքում մաշվածության ամբողջ գումարը բաշխվել է վարչական ծախսերին:

11 Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Համակարգչային ծրագրեր	229	275
Համացանցի զարգացման ծառայություններ/կայք/	836	-
Տվյալների կառավարման ծառայություններ/Ներքին ռեգիստրի ստեղծում և թվայնացում/	1,873	-
	2,938	275

12 Այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Տրված կանխավճարներ	38	61
	38	61

13 Ֆինանսական ներդրումներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ֆինանսական ներդրումներ	7,565	7,196
	7,565	7,196

Ֆինանսական ներդրումները ներառում են Հիմնադրամի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ներդրված կարճաժամկետ ավանդի գումարը, որը կազմում է 7,000.0 հազ. ՀՀ դրամ, և այդ գումարի նկատմամբ հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեգրված տոկոսները:

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Դրամարկղ	1	1
Բանկային հաշիվների մնացորդներ	12,795	13,420
Բանկային հաշիվներ արտարժույթով	96	80
Վաուչերներ ավիատոմսերի գծով	611	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**13,503**	**13,501**

Հիմնադրամի բանկային հաշիվները սպասարկվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում:

Հիմնադրամի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն թիվ 20-ում:

15 Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8,414	7,141
	8,414	**7,141**

Հիմնադրամի ակտիվներին վերաբերող շնորհներում հաշվառված են Հիմնադրամի գործունեության իրականացման համար ձեռք բերված և օգտագործվող հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները:
Ակտիվներին վերաբերող շնորհների նվազումը ճանաչվել է ֆինանսական արդյունքներում այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը:

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	105	139
	105	**139**

Հիմնադրամի կողմից հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի մնացորդներում հաշվառված են Հիմնադրամի գործունեության իրականացման հետ կապված ընթացիկ ապասարկման ծառայությունների համար հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեգրված գումարները:

17 Կրեդիտորական պարտք բյուջեին

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Շահութահարկ	164	419
Գույքահարկ	32	-
	196	419

Հիմնադրամը շահութահարկ է վճարում իր ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից:

18 Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8,342	8,092
	8,342	8,092

Հիմնադրամի եկամուտներին վերաբերող դրամաշնորհների ձևով տրամադրվող շնորհների ֆինանսական աղբյուրները և ծրագրերը հետևյալն են՝

- *ՀՀ պետական բյուջե (ՀՀ ԿԳՄՄՆ) ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ1919-Ն որոշման համաձայն, «Ակադեմիական փոխանակման և շարժունության ծառայություններ» ծրագիր - 47,260հազ. դրամ*
- *Եվրամիություն Էրազմուս+ծրագիր (Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան) - «ԲՈՒՍԹ - հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարություն և մարքեթինգի խթանում» դրամաշնորհային ծրագիր-7,611հազ.դրամ*
- *«Կրթական որակավորումների համեմատումը հոսքի ճանաչման համար-QUATREC» դրամաշնորհային ծրագիր-1,209 հազ.դրամ*
- *«Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման հարցերով հայ-նորվեգական համագործակցություն-NACAR» դրամաշնորհային ծրագիր -2,135 հազ.դրամ*

2020թ. ընթացքում եկամուտներին վերաբերող շնորհներից ծախսվել են 54,781 հազար դրամ, որոնց վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է ծախսային հոդվածներում:

19 Ընթացիկ պահուստ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Հիմնադրամի աշխատակիցների հատուցումներ չօգտագործված արձակուրդային օրերի գծով	6,230	-
	6,230	-

20 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

ա) Ամփոփ ներկայացում

Հիմնադրամը կառավարում է իր կապիտալն այնպես, որ կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում:

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում օգտագործելով ֆինանսական գործիքներ, ենթարկվում է հետևյալ ռիսկերի

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը իրենից ներկայացնում է գործընկերոջ կողմից ֆինանսական գործիքներով կամ հաճախորդի հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունները չկատարելը, որը կհանգեցնի ֆինանսական վնասի: Պարտքային ռիսկը բնորոշ է հիմնականում ֆինանսական ակտիվներին:
Հիմնադրամը ենթակա է պարտքային ռիսկի կապված իր գործառնական գործունեության (հիմնականում առևտրական դեբիտորական պարտքերի) և ֆինանսական գործունեության մասով (բանկում ավանդներ, արտարժութային գործարքներ և այլ ֆինանսական գործիքներ):
Հիմնադրամը չի պահանջում գրավ կամ այլ ապահովություն իր ֆինանսական ակտիվների գծով:
Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Պարտքային ռիսկին ենթարկվածությունը

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,503	13,501
Ֆինանսական ներդրումներ	7,565	7,196
	21,068	**20,697**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ասահմանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված շնորհների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով և Եվրոյով:

21 *Պայմանական դեպքեր*

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրություն իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների

կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Իրավական միջավայր

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի կողմից կամ Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

գ) Հարկային պարտավորություններ

Հարկային պարտավորությունները Հայաստանում

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Հիմնադրամի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

դ) Պարտավորություններ վարձակալության գծով

Հիմնադրամը 2019թ. հունիսի 09-ին ՀՀ բարեգործի Վարպետի Վաչագանի Հովհաննիսյանի հետ կնքել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Ամիրյան փողոց 27 հասցեում գործունեություն իրականացնելու համար: Վարձակալության գործողության ժամկետները, համաձայն պայմանագրերի, սկսվում են 2019թ. հունվարի 1-ից և գործում են անորոշ ժամկետով:

Վարձակալության պայմանագրերը պարունակում են դրույթներ, համաձայն որի, կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել (լուծել) պայմանագիրը՝ մյուս կողմին նախապես երեք ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով:

Հիմնադրամը՝ հիմք ընդունելով վարձակալության պայմանագրի համապատասխան դրույթները, վարձակալության պայմանագիրը ճանաչում է որպես կարճաժամկետ վարձակալություն, հետևաբար որպես վարձակալ, այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս գծային հիմունքով:

22 Գործարքներ կապակցված կողմերի հետ

ա) **Հիմնադրամը** իր հիմնադիր **հանդիսացող ՀՀ կառավարությունից**, *հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ1919-Ն որոշումը, «Պետության կողմից դրամաշնորհների ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 09.6.1/16 պայմանագրի համաձայն, հաշվետու տարում ստացել է 47,260 հազ. դրամ դրամաշնորհ, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով, իսկ 2019 թվականի ընթացքում՝ 47,260 հազ. դրամ:*

բ) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսեր հոդվածի համապատասխան տողերում՝(ծանոթագրություն 7):

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Աշխատավարձ, բաղաբացիա-իրավական ծառայություններ և պարտադիր այլ վճարներ	14,401	10,815

«ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ
"YEREVAN - AUDITCONSULT" CJSC

ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 3
info@yerevanaudit.am

Հեռ.՝ +37410 522 073
Բջջ.՝ +37493 25 05 80

www.yerevanaudit.am

YEREVAN-AUDIT
CONSULT

«21» հունիսի 2021 թ.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ակադեմիական Փոխանակման և Շարժունության Ազգային Տեղեկատվական Կենտրոն» Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք *«Ակադեմիական Փոխանակման և Շարժունության Ազգային Տեղեկատվական Կենտրոն» Հիմնադրամի* (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքի, Հիմնադրամի սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄՊ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջներին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել

բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատության վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավատիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն,

միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումների, կամ, եթե այդպիսի բացայատումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերն կամ իրավիճակները կարող են առիթ տալ Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը ներառյալ՝ ներքի հսկողության վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու՝

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ

Տնօրեն՝ _____ *Ա. Սոնյան*

Որակավորման վկայական թիվ 752

Աուդիտոր՝ _____ *Գ. Խաչատրյան*

Որակավորման վկայական թիվ 187

«21» հունիսի 2021թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.06.2021 16:49